ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2019թ. սեպտեմբերի 10-ին ստորագրված N 19/09/12 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք.Երևան 08 հունվարի 2021թ.

«Ֆոտոլուր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս տնօրեն Մելիք Բաղդասարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

(այսուհետ, յուրաքանչյուրն առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր),

Հիմք ընդունելով Կողմերի միջև 2019 թվականի սեպտեմբերի 10-ին ստորագրված N 19/09/12 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.7. կետի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները՝

ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնեցին.

1. Պայմանագրի 1.9. կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «1.9. Սույն Պայմանագրի շրջանակներում Իրավատերն Օգտագործողին Լուսանկարներ կփոխանցի մինչև 2021թ.-ի դեկտեմբերի 31-ը ներառյալ:»:
2. Սույն Համաձայնագրով սահմանված պայմանները կիրառելի են Կողմերի միջև մինչև Համաձայնագրի ստորագրումը Պայմանագրով առաջացած հարաբերությունների նկատմամբ, մասնավորապես, 2020 թվականի դեկտեմբերի 31-ից առաջացած հարաբերությունների նկատմամբ:
3. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
4. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
5. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Ֆոտոլուր» ՍՊԸ	**«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Պուշկինի 3ա	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26
ՀՎՀՀ՝ 02560325	ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470139206960000	Հ/Հ՝ 2470102796740000
Մելիք Բաղդասարյան	**Հովհաննես Մովսիսյան**
Տնօրեն	*Գործադիր տնօրեն*